

## ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝

15.12.2022 թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրություն

### Օրակարգ

1. ԵԼՀ դեկանի տարեկան հաշվետվություն:
2. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստին գիտխորհրդի 36 անդամներից ներկա էին 31-ը: Նիստին ներկա էին նաև ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը, ԵՊՀ գիտքարտուղար Մ. Հովհաննիսյանը: Միաձայն քվեարկության արդյունքում նիստի նախագահող ընտրվեց Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Բ. Գ. Պ., պրոֆեսոր Ս. Գասպարյանը: Ս. Գասպարյանը ամբիոնի մոտ հրավիրեց ԵԼՀ դեկան Գ. Բարսեղյանին՝ ներկայացնելու տարեկան հաշվետվությունը:

**ԼՍԵՑԻՆ՝** ԵԼՀ դեկան Գ. Բարսեղյանի տարեկան հաշվետվությունը 2021-2022 ուստարվա ուսումնամեթոդական, գիտական և դաստիարակչական աշխատանքների վերաբերյալ: Գ. Բարսեղյանը նշեց, որ ԵԼՀ ֆակուլտետի դեկանի պաշտոնում 2021-2022 ուստարվա ընթացքում ԵՊՀ գործող կանոնադրության և օրինադրության իրավասության շրջանակներում իրականացրել է ուսումնամեթոդական, գիտական և դաստիարակչական աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը:

### Ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքներ

Ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների բնագավառում Ֆակուլտետում իրականացվել է զգալի աշխատանք: Ամենակարևորների շարքում՝ Ֆակուլտետի տարբեր ամբիոններում գործող ուսումնական աշխատանքային պլաններով նախատեսված մասնագիտական դասընթացների դասավանդման ապահովումը և դրա վերահսկողության իրականացումը: Մշտապես տեսադաշտում է եղել ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակման, լրամշակման և բարելավման գործընթացը: ԵԼՀ ամբիոնների ուշադրությունից դուրս չի մնացել նաև դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների և դասավանդման արդյունավետությանը նպաստող տարբեր այլ նյութերի հավաքագրման, ստեղծման ու հրատարակման աշխատանքը:

Ինչպես գիտնք, դեկանի գործունեության կարևորագույն կողմերից է բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական գործընթացների, ընթացիկ և հանրագումարային քննությունների և ստուգարքների նախապատրաստման և իրականացման աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը, որը, շնորհիվ ամբիոնների հետ դեկանի հետևողական աշխատանքի, նույնպես կատարվել է հավուր պատշաճի:

Նշեց՝ Ֆակուլտետում մշտական ուշադրության կենտրոնում է եղել և շարունակում է մնալ ուսումնական գործընթացի արդյունավետության ապահովման կարևորագույն գրավականներից մեկը՝ ուսումնական և աշխատանքային կարգապահության խնդիրը: Դեկանատի և դեկանի տեղակալների ջանքերով նվազագույնի է հասցվել ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների անհարգելի բացակայությունների թիվը:

### **Գիտահետազոտական աշխատանքներ**

2021-2022 ուսումնական տարին գիտահետազոտական աշխատանքների առումով ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի համար ավարտվել է բավականին արդյունավետ: Ֆակուլտետի 9 ամբիոններն էլ ջանք ու եռանդ չեն խնայել մնալու իրենց գիտական բարձր մակարդակի վրա, տարին ավարտելու բարձր արդյունավետությամբ:

Ընդհանուր առմամբ ԵԼՀ ֆակուլտետի 9 ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների արդյունքներն են հրատարակված մի քանի մենագրություններ և բազմաթիվ գիտական հոդվածներ, որոնք հրատարակվել են ՀՀ և արտերկրի հայտնի ամսագրերում: Դեկանը նշեց, որ թե՛ գիտական և թե՛ ուսումնական առումով չափազանց կարևոր և օգտակար է համարում հաշվետու ուսումնական տարում արտերկրի տարբեր առաջատար համալսարաններից ֆակուլտետ ժամանած որակյալ մասնագետների դասախոսությունների ունկնդրումը և քննարկումները կազմակերպելու գործը, որը նույնպես շատ արդյունավետ է ընթացել և դեռ շարունակվում է:

Հաշվետու տարում ֆակուլտետում աշխուժացել է ուսանողական կյանքը: ԵԼՀ ֆակուլտետի ուսանողները ակտիվ մասնակցություն են ունեցել թե՛ ԵՊՀ-ի և թե՛ հանրապետության այլ բուհերի կողմից իրականացվող մի շարք ուսանողական միջոցառումների: Ֆակուլտետի ՈՒԳԻ և ՈՒԽԻ ջանքերով հաշվետու տարում ֆակուլտետում անցկացվել են ուսանողների ընդհանուր գիտելիքների և մտահորիզոնի զարգացմանը ուղղված մի ամբողջ շարք հետաքրքիր ձեռնարկումներ, սեմինարներ, այցելություններ պատմամշակութային վայրեր, թանգարաններ և այլն:

### **ԱՆԳԼԻՎԿԱՆ ԲԱՆՎՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում, ինչպես սովորաբար, անգլիական բանասիրության ամբիոնը գործունեություն է ծավալել հետևյալ հիմնական ուղղություններով.

- 1. Ուսումնական աշխատանք**
- 2. Գիտական աշխատանք**

3. **Գիտակազմակերպական աշխատանք**
4. **Միջազգային կապերի ընդլայնում**
5. **Հրատարակչական գործունեություն**

**Ուսումնական** աշխատանքների բնագավառում ամբիոնն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

- Վերանայվել ու վերանշակվել են ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը
- Բարեփոխվել են մագիստրոսական ծրագրերը:
- Հանգամանալից քննարկման է ենթարկվել հիմնական դասագրքերի արդյունավետության որոշարկման հարցը, կատարվել են համապատասխան փոփոխություններ:
- Ամբիոնը բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի հետ համատեղ մշակել է <<Գրահրատարակչական գործ>> մագիստրոսական ծրագիրը, որի արդյունավետ իրականացումը հնարավորություն կտա համապատասխան մասնագիտական դաշտը ապահովելու որակյալ մասնագետներով: Այս ծրագիրն ընթացքի մեջ է:

**Գիտահետազոտական** դաշտում ամբիոնը նույնպես դրսևորել է լուրջ ակտիվություն: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում հրատարակվել է.

4 Մենագրություն

2 Դասագիրք

2 Ուսումնական ձեռնարկ

46 Հոդված /4 SCOPUS, 1 Web of Science/-ում

10 Չեկոցումներ գիտաժողովներում և տպագրված թեզիսներ

Ամբիոնն ունի 4 առկա, 1 հեռակա ասպիրանտ և 3 հայցորդ, որոնց հետ տարվող աշխատանքները նույնպես բնականոն ընթացքով առաջ են գնում: Հաշվետու ժամանակահատվածում վերը հիշատակված ասպիրանտներից 3-ն արդեն պաշտպանել են, իսկ մյուսների աշխատանքն առաջ է ընթանում:

Այս ոլորտում ամբիոնը զգալի աշխատանք է կատարում նաև հանրապետության տարբեր բուհերում կատարված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների գրախոսում, փորձաքննություն և քննարկում իրականացնելու գործում:

Ամբիոնի գիտահետազոտական աշխատանքի մաս են կազմում նաև պետքյուջջեից ֆինանսավորվող գիտահետազոտական 2 լաբորատորիաները, որոնց ակտիվ աշխատանքի շնորհիվ շարունակվում է 2 կարևոր բազային թեմաների ուսումնասիրության ընթացքը՝ 1. “Անգլալեզու հակահայկական քարոզչական դիսկուրսի հետազոտություններ” 2. “Բրիտանական գրականության և լեզվամշակույթի ուսումնասիրություն”։ Այս շրջանակներում հրատարակվել են բազմաթիվ հոդվածներ՝ այդ թվում նաև արտերկրում։ Անգլալեզու հակահայկական քարոզչական դիսկուրսի հետազոտությունների լաբորատորիայի ջանքերով հաշվետու ուսումնական տարում իրականացվել է գիտական սեմինարների երկրորդ շարքը՝ նվիրված “Մտաշահարկային (manipulative) մեխանիզմների կիրառումը քաղաքական դիսկուրսում” արտերկրից ժամանած մասնագետների ընդգրկմամբ։ Աշխատանքային խմբի կողմից անցվեցին կատարված հետազոտությունների արդյունքները հրապարակելը, համացանցում տեղադրելը, դրանք անգլալեզու լայն հասարակությանը մատչելի դարձնելը չափազանց կարևոր ռազմավարական նշանակություն ունի։

Ներկայումս 2 լաբորատորիաներն էլ անցել են հայագիտական հետազոտությունների և հումանիտար հետազոտությունների ինստիտուտների հովանու ներքո։

Ամբիոնի գործունեությունը ակտիվ է նաև **գիտակազմակերպական աշխատանքների** ոլորտում։ Այս ոլորտում ամբիոնը արտասահմանյան գրականության ամբիոնի հետ համատեղ 2022 թ. ապրիլին կազմակերպեց միջազգային գիտաժողով Postmodernism in humanities խորագրով։ Միջազգային կապերի ընդլայնման առումով կարևոր դեր են խաղում արտերկրի գործընկերների այցելությունները դասախոսություններ կարդալու, սեմինար քննարկումներ անցկացնելու, ինչպես նաև հրատարակչական համագործակցություն իրականացնելու մտադրությամբ։ Ամբիոնը այս առումով պայմանավորվածություններ ունի մի շարք այցելու պրոֆեսորների հետ։

Համագործակցության ընդլայնման հարցում չափազանց կարևոր են նաև ամբիոնի ուսանողների և ասպիրանտների ակտիվ ու արդյունավետ մասնակցությունը Erasmus+ մասնագիտական շարժունության ծրագրերին, որոնք նպաստում են արտերկրի համապատասխան ամբիոնների հետ համագործակցային կապերի սերտացմանն ու ընդլայնմանը։

Հրատարակչական դաշտում 2005 թ.-ից ի վեր ամբիոնի մշտական ուշադրության և հոգածության կենտրոնում է անգլիագիտական հետազոտությունների հայկական

(**Armenian Folia Anglistika** ) գրախոսվող մասնագիտական հանդեսը, որն արդեն զգալի առաջընթաց է գրանցել:

Հանդեսն արդեն ընդգրկված է միջազգային տեղեկատվական 9 շտեմարաններում: Հանդեսը նպատակ ունի, սակայն, հաղթահարելու նաև Web of Science և SCOPUS համակարգերի գնահատման չափորոշիչները: Այս ուղղությամբ մեծ աշխատանք է տարվում:

Անգլիական բանասիրության ամբիոնի մասնագետների, մասնագիտական բարձր որակները հիմք են տալիս նրանց պարբերաբար արժանացնելու տարբեր առյանների բարձր գնահատականին: Հաշվետու տարում ԵՊՀ ոսկե մեդալով են պարգևատրվել ամբիոնի վաստակաշատ դոցենտներ Սվետլանա Վարդանյանը և Մարիկա Տոնյանը: Երկարամյա արգասավոր գործունեության համար նախարարության շնորհակալագրի է արժանացել ամբիոնի դոցենտ Նվարդ Երնջակյանը:

### **Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոն**

Հաշվետու ժամանակահատվածը հատկապես կարևոր է եղել միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի համար, քանի որ ուսումնական գործընթացը անխափան կազմակերպելուն, ուսանողների ուսումնական ու գիտական աշխատանքները ուղղորդելուն զուգահեռ ամբիոնը ներգրավվել է միջազգային չափանիշներին համապատասխանող կրթական ծրագրեր, դասավանդման մեթոդներ մշակելու և ամբիոնում ներդնելու գործին: Մագիստրոսական ծրագրերի շրջանակներում ամբիոնը համագործակցում է ԵՊՀ այլ հումանիտար ֆակուլտետների հետ՝ տնտեսագիտության, սոցիոլոգիայի, միջազգային հարաբերությունների, փիլիսոփայության և հոգեբանության՝ օգտագործելով այդ ֆակուլտետների առաջատար դասախոսների ներուժը:

Միջմշակութային հաղորդակցության ամբիոնը համագործակցում է ՏՏ ոլորտի մի շարք կազմակերպությունների հետ (մասնավորապես՝ Synergy Armenia և Microsoft), որոնց մասնագետները վարպետության դասընթացներ են վարում բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար ինչպես համալսարանում, այնպես էլ տվյալ կազմակերպություններում: Ամբիոնի դասախոսների համակարգչային ուսուցման կամ թվային ուսումնառության մեթոդներին տիրապետելու գործում մեծապես նպաստել են ամերիկացի դասախոսները, որոնք ԱՄՆ կառավարության դրամաշնորհային ծրագրերով ամեն տարի դասավանդում են ամբիոնում և դասախոսների համար գործնական սեմինարներ և աշխատաժողովներ կազմակերպում: Ամբիոնի համագործակցությունը Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքի ՖԱՏԵ-Ք համալսարանի հետ:

Այս տարվա փետրվար-մարտ ամիսներին, COIL ծրագրով Online հարթակում մեկամսյա համագործակցության ընթացքում, միջմշակութային հաղորդակցության բաժնի ուսանողները, ամբիոնի դասախոս Անուշ Այունցի և բրազիլացի դասախոսների հետ միասին անգլերեն են դասավանդել բրազիլացի ուսանողներին: Կողմերի համաձայնությամբ նախատեսվում է այս ծրագիրը կրկնել 2023 թվականի փետրվար-մարտ ամիսներին, որը հայ ուսանողների համար կհամարվի մասնագիտական պրակտիկա: Ուսանողներին ծրագրի ավարտին շնորհվեցին հավաստագրեր:

Դեկանը հավելեց, որ առանձնահատուկ կարևոր է համարում ամբիոնի համագործակցությունը Նորվեգիայի Օսլո քաղաքի Օսլոմետ համալսարանի հետ: Այս տարվա նոյեմբերին ամբիոնը՝ վերը հիշատակված համալսարանի հետ ԵՊՀ-ում համատեղ անցկացրեց գիտական սեմինար Intercultural Encounters in Academia and Workplaces in South Caucasus and Norway խորագրով: Ամբիոնը համագործակցում է նաև ԱՄՆ Խաղաղության կորպուսի կրթական ծրագրերի բաժնի հետ:

Անդրադառնալով ամբիոնում կատարվող գիտահետազոտական աշխատանքներին՝ նշվեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի դասախոսների կողմից տպագրվել է 19 հոդված, 2 ուսումնական ձեռնարկ և 1 մենագրություն: Ամբիոնն ունի 2 հեռակա և 1 առկա ասպիրանտ:

### **Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոն**

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2021-22 ուստարվա ընթացքում կենտրոնացրել է իր գիտամանկավարժական աշխատանքը ոչ միայն գրավոր թարգմանության հմտությունների զարգացման, այլև կարևոր շեշտ է դրել բանավոր թարգմանության (հաջորդական և համաժամանակյա) յուրահատկությունների դասավանդման վրա:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի աշխատանքները ընթացել են ըստ հաստատված ուսումնական պլանի, միևնույն ժամանակ կատարելով փոփոխություններ հաջորդ տարվա ուսումնական ծրագրերում: Կարևորագույն ձեռքբերում է նոր «Զբոսաշրջային թարգմանություն (անգլերեն-հայերեն)» մագիստրոսական կրթական ծրագրի ընդգրկումը: Այս ծրագրի ստեղծման գործընթացում ամբիոնը համագործակցել է ինչպես ներ-ֆակուլտետային ամբիոնների, այնպես էլ Աստվածաբանության, Իրավագիտության և Տնտեսագիտության ֆակուլտետների հետ: Ծրագրի առավելություններից մեկն էլ այն է, որ բոլոր առարկաները դասավանդվում են բացառապես անգլերեն լեզվով և համապատասխան որակավորմամբ մասնագետների կոմից:

Ի թիվս այլ փոփոխությունների ավելացվել է նաև նոր մասնագիտացում՝ «Թարգմանչական գործ» բակալավրական ծրագրի մեջ : Կատարվել են փոփոխություններ մագիստրոսական կրթական ծրագրերի տևողության մեջ՝ «Վարչագործարարական թարգմանություն» և «Չբոսաշրջային թարգմանություն (անգլերեն-հայերեն)» ծրագրերի տևողությունը կրճատվել է՝ դառնալով 1.5 տարի, իսկ «Թարգմանչական գործ (անգլերեն)» կրթական ծրագիրը՝ 1 տարի :2021-22 ուստարում լույս է տեսել « Translation Studies: Theory and Practice» միջազգային հոդվածների ժողովածուի 2 համարը, ընդ որում նշված տարում պարբերականը ներառվել է ԲՈՒԿ-ի գիտական հանդեսների ցանկում և այժմ աշխատանք է տարվում SCOPUS-ում ներառվելու ուղղությամբ :

Կարևորագույն ձեռքբերում է նաև Արդարադատության նախարարության և ԵԼՀ-ի միջև կնքված հուշագիրը, ըստ որի Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնը ձեռք է բերել նոտարական թարգմանչի արտոնագրի համար նախատեսված քննության կազմակերպման և իրականացման իրավունքը: Այս իրավունքի հիման վրա մեր մասնագետների կողմից առաջին անգամ անցկացվել է նոտարական թարգմանչի լիցենզավորման քննությունը (նոյեմբեր, դեկտեմբեր):

Ամբիոնի մի քանի դասախոսներ մասնակցել են Քեմբրիջի համալսարանի կողմից ՀՀ-ում կազմակերպվող CELTA դասընթացին, որի արդյունքում նրանց շնորհվել է անգլերենի դասավանդման միջազգային հավաստագիր, իսկ մի քանիսն էլ Erasmus+ ծրագրի շրջանակներում դասախոսություններ են կարդացել արտերկրի առաջատար համալսարաններում :

Հոկտեմբեր ամսին անց է կացվել թարգմանչաց տոնը՝ Օշականում, որի շրջանակներում ուսանողները կազմակերպել են մի շարք միջոցառումներ :

Ուսումնական տարվա ընթացքում ամբիոնում կազմակերպվել են մի շարք արտալսարանային աշխատանքներ, այդ թվում՝ սեմինարներ, հանդիպումներ թարգմանիչների հետ, օտար լեզուներով կինոդիտումներ, քննարկումներ և այլն: Տեղի են ունեցել այցելություններ թանգարաններ, Երևանի Մատենադարան, կազմակերպվել են միջոցառումներ գրքի տոնի կապակցությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի դասախոսների կողմից տպագրվել է 20 հոդված և 2 մենագրություն:

### **Անգլերենի թիվ 1 ամբիոն**

Անգլերենի թիվ 1 ամբիոնը բացի ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում իրականացվող անգլերեն լեզվի դասընթացներից 2010թ.-ից որդեգրել է միջազգային թեստավորման ուղին և հանդիսանալով TOEFL միջազգային թեստավորման պաշտոնական կենտրոն՝ յուրաքանչյուր տարի հաջողությամբ իրականացնում է նախապատրաստական

դասընթացներ և թեստավորում ԵՊՀ և ՀՀ պետական տարբեր բուհերի ասպիրանտուրայի հավակնորդների համար: Ամբիոնը հաշտությանը իրականացրել է ITEP քննություն՝ անգլերենի իմացության միջազգային վկայագրի տրամադրմամբ:

Միջազգային թեստավորման փորձ ձեռք բերած ամբիոնի մի շարք դասախոսներ անց են կացնում լեզվի իմացության B1, B2 մակարդակի եվրոպական սանդղակին համապատասխան դասընթացներ: Շարունակվում է ԲՈԿ-ի ցանկում ներառված FLSP պարբերականի հրատարակությունը ամբիոնի կողմից:

Անգլերենի թիվ 1 ամբիոնի դասախոսները հեղինակել են 3 դասագիրք և 3 հոդված: 2019-ի տարեվերջին ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ, անգլերենի թիվ 1 ամբիոնը հանձն է առել կյանքի կոչելու «Լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոնի»՝ գաղափարը, որի շրջանակներում ֆակուլտետի ամբիոնների աջակցությամբ կազմակերպվել են բարեգործական դասընթացներ /տարբեր օտար լեզուներով/ Արցախցի շուրջ 100 դպրոցականների համար՝ հետպատերազմյան շրջանում ապահովելով նրանց կրթության շարունակականությունը:

2021-2022 ուստարում Կենտրոնը՝ շարունակելով իր ակտիվ գործունեությունը կազմակերպել և իրականացրել է. ընդհանուր և մասնագիտական անգլերենի մի շարք դասընթացներ՝ գիտելիքների նախնական ստուգմամբ, որոնք անցկացվել են ԵՊՀ լավագույն դասախոսների կողմից հատուկ մշակված ծրագրերով:

Կենտրոնի կողմից մշակվել են դասընթացների ծրագրեր լեզվի իմացության համաեվրոպական սանդղակի (CEFR) բոլոր մակարդակներով (A1-C2)՝ մեծահասակների և տարբեր տարիքային խմբի երեխաների համար:

Կենտրոնը նաև ստացել է համագործակցության առաջարկ American Home միջազգային կազմակերպության հայաստանյան ներկայացուցչի կողմից՝ կազմակերպելու լեզվի ուսուցման և միջազգային թեստավորման նախապատրաստական դասընթացներ:

Այժմ կենտրոնը՝ ԵՊՀ արհեստակցական կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում, կազմակերպում է օտար լեզվի դասընթացներ ԵՊՀ աշխատակիցների երեխաների համար:

Ամբիոնի և PASS ուսուցման կենտրոնի համագործակցության շրջանակներում՝ Երևանի Մխիթար Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարանի օտար լեզվի պրոֆեսորադասախոսական կազմի համար իրականացվել են Cambridge TKT ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթացներ, որոնք անցկացվել են Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության ամբիոնի դասախոսների ներգրավվածությամբ: Դասընթացի



ավարտին մասնակիցներին տրվել են ԵՊՀ և Cambridge Assessment English համաստեղ հավաստագրեր:

2022թ. ապրիլին անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ պրոֆեսոր Մ. Ապրեսյանը Cambridge Assessment English-ի հայաստանյան ներկայացուցչի կողմից հրավիրվել է մասնակցելու «Ժամանակակից անգլերենի ուսուցիչ» մրցույթին՝ որպես հանձնաժողովի ԵՊՀ ներկայացուցիչ և ստացել հետագա համագործակցության առաջարկ:

## **Անգլերենի թիվ 2 ամբիոն**

**Անգլերենի թիվ 2 ամբիոնն իր գործունեությունը ծավալում է մի քանի ուղղություններով՝ ուսումնական, ուսումնամեթոդական, գիտական, հրատարակչական և ուսումնադաստիարակչական:**

Ամբիոնը անգլերենի դասավանդումը հիմնականում ապահովում է ԵՊՀ մի շարք հումանիտար ֆակուլտետներում: Դասավանդման հիմքում են բակալավրիատում անգլերենը որպես օտար/երկրորդ լեզու՝ (EFL/ESL) և անգլերենը մասնագիտական նպատակների համար (ESP), իսկ մագիստրատուրայում՝ անգլերենը ակադեմիական նպատակների համար (EAP) դասընթացները: Անգլերենի թիվ 2 ամբիոնում վերանայվել են բակալավրի ուսումնական ծրագրերը, հաշվի առնելով այն փաստը, որ օտար լեզվի ժամաքանակը նվազեցվել է, և այսուհետ օտար լեզուները որպես պարտադիր դասընթաց բակալավրիատում ուսումնասիրվում են ընդամենը մեկ ուսումնական տարի: Այս հանգամանքը թելադրեց որոշակի փոփոխություններ կատարել:

Այնուամենայնիվ, այս ամենը հաշվի առնելով, ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու, ինչպես նաև դասավանդման որակը բարձրացնելու նպատակով կիրառվում է տարբերակված անհատական մոտեցում յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ: Դա հնարավոր է դառնում թե՛ դասախոսների աշխատանքի շնորհիվ, թե՛ ամբիոնի կողմից ժամանակակից **տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ICT) կիրառմամբ:**

Գիտահետազոտական աշխատանքն ամբիոնի անձնակազմի գործունեության անքակտելի մասն է կազմում: Կատարվում են ուսումնասիրություններ արդի լեզվաբանության տարբեր ուղղություններով՝ բառագիտության, իմաստաբանության և գործաբանության, լեզուների գույադրական ուսումնասիրության, բառարանագրության ինչպես նաև օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ:

Ամբիոնի անդամները նույնպես ակտիվ են միջազգային գիտաժողովների և տարբեր ուսումնական ծրագրերի մասնակցելու հարցում, այդ թվում՝ PRINTEeL նախագծին:

Մասնավորապես, հաշվետու ուսումնական տարում ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ելենա Երզնկյանը մասնակցել է մի շարք միջազգային գիտաժողովների, մասնավորապես, Գերմանիայում, Ռուսաստանում, Լեհաստանում: Ամբիոնը ի դեմս ամբիոնի վարիչի նախագահությամբ կազմակերպում է Երևանի Պետական Համալսարանում գործող 009 /օտար լեզուներ/մասնագիտական խորհրդի աշխատանքները: Ներկայումս ամբիոնն ունի 4 հայցորդ, որոնք աշխատում են թեկնածուական թեզերի վրա: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսները գիտական տարբեր պարբերականներում, այդ թվում նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունված ամսագրերում, հրատարակել են 11 գիտական հոդված և 3 ձեռնարկ: Անգլերենի թիվ 2 ամբիոնը կանոնավոր պարբերականությամբ հրատարակում է «**Օտար լեզուները բարձրագույն դպրոցում**» գիտական հանդեսը, որը լույս է տեսնում տարին 2 անգամ և ընդգրկված է ատենախոսությունների արդյունքների տպագրման համար ընդունելի ամսագրերի՝ ԲՈԿ-ի ցանկում:

### **Արտասահմանյան գրականության ամբիոն**

Հաշվետու ուսումնական տարում արտասահմանյան գրականության ամբիոնը արդյունավետ կերպով կատարել է իր առջև դրված պարտականությունները՝ նկատելի առաջընթաց գրանցելով ինչպես ուսումնակրթական, այնպես էլ գիտամեթոդական աշխատանքների գծով: Ամբիոնի կողմից հաշվետու տարում զգալի աշխատանք իրականացվեց կրթական երկու նոր ծրագրի մշակման ուղղությամբ: Առաջինը բակալավրի ծրագիր է և ունի «Ստեղծագործական վարպետություն և արտասահմանյան գրականություն» անվանումը, երկրորդը մագիստրոսական ծրագիր է և կրում է «Արտասահմանյան գրականություն և գրական-մշակութային գործի մենեջմենթ» անվանումը: Երկու ծրագրերն էլ միտված են արտասահմանյան գրականությունը, որպես առարկա, առավել մոտեցնել գործնական կյանքի պահանջներին: Ծրագրերը մշակելիս ամբիոնը հանգամանորեն ուսումնասիրել է ինչպես միջազգային փորձը, այնպես էլ հանրապետության կրթական և աշխատանքային շուկաների հնարավորությունները: 2 ծրագրերն էլ հաստատման փուլում են:

Կուզենայի հարգարժան գիտխորհրդին զեկուցել ամբիոնում տարվող ոչ միայն գիտական, մեթոդական աշխատանքների մասին, այլև միջմշակութային համագործակցության և մշակութային կապերի մասին:

Արտասահմանյան գրականություն ծրագրով, եռամսյա դասընթացների պայմանագիր է կնքվել Հնդկաստանից, Նեպալից, Թայլանդից և Մալազիայից եկող ուսանողների վճարովի ուսուցում կազմակերպելու նպատակով: Դասընթացը կրում է «Բուդդիզմի դիսկուրսը

ժամանակակից արևմտյան գրականության մեջ>> անվանումը և ներառում է մի շարք այլ առարկաներ, օրինակ, <<Էմիգրանտական գրականությունը ֆրանսերեն>> և այլն:

Կոստվոյի նորահռչակ հանրապետություն այցելության ընթացքում իմ կողմից գլխավորաժամ պատվիրակությանը հաջողվեց հասնել նախնական պայմանավորվածության Կոստվոյի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի հետ, երկկողմ Կոստվո - Հայաստան միջմշակութային և կրթական փոխանակություն իրականացնելու վերաբերյալ, թե՛ Erasmus+ ծրագրի շրջանակներում, թե՛ ուղիղ պայմանագրերի կնքման միջոցով: Եկող տարվա մարտի վերջին կամ ապրիլի սկզբին ակնկալվում է Կոստվոյի պատվիրակության պատասխան այցը, քանի որ վերջիններս շատ շահագրգռված են ԵՊՀ-ի հետ կապերը խորացնելու և ընդլայնելու հարցում: Արտասահմանյան գրականության ամբիոնը զարկ է տվել բացարձակ նոր ծրագրերի համակարգի, որտեղ ներառվում են միաժամանակ և՛ գրական մշակութային կապերը, և՛ համայնքի հետ կապերի գործառույթները: Ընթացքի մեջ է ևս մի ծրագիր՝ <<Պոետների ակումբը>> , որն անցկացվում է արտասահմանյան գրականության ամբիոնի մագիստրոսների, իսկ այժմ արդեն ծրագրին մասնակցող շատ կամավորների ջանքերով: Առաջին արտագնա հանդիպումը տեղի է ունեցել Ծաղկաձորում, որտեղ նիստերի դահլիճում քննարկվել են հայդեգերյան և լուրենսյան հիմնական թեզերը և դրանց առնչությունը գրականության հետ: Երկրորդ հանդիպումը կայացել է Գլաձորում Վայքի թեմի և համայնքի երիտասարդության հետ համատեղ: Արտասահմանյան գրականության ամբիոնը անգլիական բանասիրության ամբիոնի հետ համատեղ ապրիլ ամսին կազմակերպեց ֆակուլտետի 30-ամյակին նվիրված գիտաժողով՝ /Postmodernism in Humanities/ վերնագրով: Ամբիոնի անդամների համատեղ ջանքերով Արտասահմանյան գրականության ամբիոնը հանդես է եկել <<Պանդեմիան և համաշխարհային գրականությունը>> խորագրով անդրանիկ հեռուստատեսային հաղորդաշարով:

Ամբիոնի դասախոսները պարբերաբար մասնակցում են ինչպես ԵՊՀ-ում, այնպես էլ հանրապետության այլ բուհերում և արտերկրում անցկացվող գիտաժողովներին:

Հաշվետու տարում ամբիոնի անդամների կողմից տպագրված հոդվածների քանակը 12-ն է: Մենագրությունները թվով 5-ն են:

Անցած տարվա ընթացքում ամբիոնի մասնագիտական խորհրդում պաշտպանվել է 3 ատենախոսություն: Ներկա դրությամբ ամբիոնում իրենց հետազոտական աշխատանքներ են իրականացնում ութ հեռակա և երեք առկա ասպիրանտներ, ինչպես նաև մեկ հայցորդ:

## **Ռոմանական բանասիրության ամբիոն**

2021-2022 ուս. տարում ռոմանական բանասիրության ամբիոնը իր աշխատանքներն իրականացրել է 3 հիմնական ուղղություններով՝ ուսումնամեթոդական, գիտական և թարգմանչական: Ամբիոնը ապահովում է ռոմանական 2 լեզուների դասավանդում՝ իսպաներեն և իտալերեն:

Ամբիոնում կատարված աշխատանքների շարքում կարևորվել է բակալավրի նոր կրթական ծրագրերի ստեղծումը:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը ընդունել է այցելու դասախոսների: Կազմակերպել է նրանց դասախոսություններն ու սեմինարները, ինչպես ուսանողների, այնպես էլ պրոֆեսորադասախոսական կազմի համար :

Ամբիոնի գործունեության առանցքային խնդիրներից է դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, մենագրությունների, հոդվածների հրատարակումը:

Ամբիոնը մեծ աշխատանքներ է կատարել նաև դասախոսների վերապատրաստման համար առցանց սեմինարներ կազմակերպելով:

Ռոմանական բանասիրության ամբիոնում սովորող ուսանողներն ակտիվ մասնակցություն ունեն Erasmus+ նախագծում :

Ամբիոնի միջազգային համագործակցության զարգացման առումով հարկ է կարևորել նաև, որ ամբիոնի իսպանական բաժնի բակալավրի և մագիստրատուրայի 10 ուսանող 2021/2022 ուստարում Erasmus+ ծրագրի շրջանակներում սովորել են Իսպանիայի տարբեր համալսարաններում՝ Կադիսի, Ալմերիայի, Վալենսիայի, Գրանադայի և Մադրիդի Կոմյուտենսե համալսարաններում: Նմանապես, իտալական բաժնի 3 ուսանող սովորել են Վենետիկի Կա Ֆոսկարիի և Մեսինայի համալսարաններում: Ամբիոնն ունի նաև լեզվակիր դասախոս, Օռնելլա Չիրիոն, որի դասընթացները նպաստում են իտալական բաժնի ուսանողների հաղորդակցական կարողությունների զարգացմանը : Իտալերենի դասավանդման գործում մեծ ներդրում ունի Հայաստանում Իտալիայի դեսպանատունը, որը տրամադրում է տարբեր կրթաթոշակներ, կազմակերպում տարբեր միջոցառումներ:

Ամբիոնի միջազգային համագործակցության զարգացման առումով կարևորվում է այն սեմինարներն ու դասախոսությունները, որոնք կարդացել են ամբիոնի դասախոսները արտասահմանյան հեղինակավոր բուհերում: Այսպես, ամբիոնի 3 դասախոսներ Erasmus+ ծրագրի շրջանակում դասախոսություններ են կարդացել Վալյադոլիդի, Նեապոլի Լ'Օրիենտալե, Վենետիկի Կա' Ֆոսկարի, Մադրիդի Կոմյուտենսե համալսարաններում:

Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ պրոֆեսոր, Հասմիկ Բաղդասարյանը 2022 թվականի հունիսին, Erasmus+ ծրագրի շրջանակներում Մադրիդի

Կոմպլուտենսե համալսարանում մասնակցել է միջազգային սեմինարների և կարդացել դասախոսությունների շարք:

Ռոմանական բանասիրության ամբիոնում արդեն ավանդույթ է դարձել Մերվանտեսի ինստիտուտի հետ համագործակցությամբ կազմակերպել «Իսպաներենը որպես օտար լեզու» DELE անվանումը կրող, որակավորման միջազգային քննությունը՝ օտար լեզուներին ներկայացվող եվրոպական արդի չափանիշներին համապատասխան:

Հայաստանում Իտալիայի դեսպանատան և Միենայի համալսարանի հետ համագործակցությամբ կազմակերպվել է իտալերենի CILS միջազգային քննությունը: Այս քննությունը տալիս է միջազգայնորեն ճանաչված դիպլոմ :

Միջազգային համագործակցության առումով նշվեց նաև Գրանադայի համալսարանի հետ կնքված խոստումնալից պայմանագիրը:

Ուսումնական գործընթացներից զատ՝ ամբիոնում կազմակերպվել են մի շարք մշակութային միջոցառումներ: Առժամանակից տակ է 2022 թվականի հուլիսի 15-ին իսպանացի հայտնի գրող, Հայոց ցեղասպանությանը նվիրված Եռագրության հեղինակ Գոնսալո Գուարչի հետ ռոմանական բանասիրության ամբիոնում կազմակերպված հանդիպումը, որտեղ անվանի գրողը հանդես է եկել «Գեղարվեստական ստեղծագործության մի քանի հարցեր» թեմայով դասախոսությամբ:

### **Ֆրանսիական բանասիրության ամբիոն**

Հաշվետու տարում, ինչպես և նախորդ տարիներին, ֆրանսիական բանասիրության ամբիոնի հիմնական խնդիրը եղել և մնում է ուսումնական պրոցեսի արդյունավետ կազմակերպումը:

Այս ուսումնական տարում արդյունավետ էր նաև գիտահետազոտական կյանքը:

Նորընտիր ամբիոնի վարիչի ջանքերով 2022 թվականի ապրիլին Ֆրանկոֆոնիայի երկամսյակի շրջանակում տեղի է ունեցել ԵԼՀ ֆրանսիական բանասիրության ամբիոնի և Ֆրանսիայի Լիլի համալսարանի համատեղ կազմապերպած «Խոսույթը գիտական համատեքստում» խորագրով միջազգային գիտաժողովը, որին մասնակցեցին դասախոսներ, գիտաշխատողներ, ասպիրանտներ, հայցորդներ Ֆրանսիայի, ՌԴ-ի և ՀՀ-ի համալսարաններից:

Ամբիոնն ակտիվ մասնակցություն ունի նաև ֆրանսերենի դպրոցական դասագրքերի թողարկման գործին:

Հաշվետու տարում ամբիոնի անդամների կողմից տպագրված հոդվածների քանակը 10-ն է: Թարգմանված գրքերի քանակը 3-ն է: Լույս է տեսել 2 ուսումնամեթոդական ձեռնարկ: Ֆրանսիական բանասիրության ամբիոնի մի քանի հայցորդներ ու դասախոսներ շարունակում են աշխատանքը ատենախոսական թեզերի վրա: Ամբիոնն ունի նաև երկու

հեռակա ասպիրանտ: Ամբիոնում ակտիվ է նաև միջազգային համագործակցությունը, մասնավորապես, Ֆրանսիայի Մոնպելիե և Էքս քաղաքների համալսարանների, ինչպես նաև Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության հետ: 2022 թվականին ԵՊՀ Ֆրանսիական բանասիրության և Ֆրանսիայի Լիլի համալսարանի միջև ձեռք է բերվել համաձայնություն «Միջազգային հաղորդակցություն և գործարարություն» մագիստրոսական նոր կրթական ծրագրի վերաբերյալ: Ծրագիրը իրականացվելու է Լիլի համալսարանի հետ համատեղ՝ կրկնակի դիպլոմի տրամադրմամբ:

Հավելենք նաև, որ Ֆրանսիական ամբիոնը Ուսանողական խորհրդի հետ ստեղծել է ֆրանկոֆոն ակումբ, որի նպատակն է ընդլայնել Հայաստանում ֆրանկոֆոն համայնքը: Ակումբը շաբաթական երկու անգամ հանդիպումներ է կազմակերպում, որոնց նպատակն է քննարկել ֆրանկոֆոնիայի վերաբերյալ տարբեր հարցեր, նպաստել ֆրանսախոսների լեզվական հմտությունների զարգացմանը:

### **Գերմանական բանասիրության ամբիոն**

Ուսումնական տարին գերմանական ամբիոնի համար առանձնացավ մի շարք փոփոխություններով: Տեղի ունեցան տարաբնույթ մեթոդաբանական/մանկավարժական վերապատրաստումներ, քննարկումներ:

Ամբիոնում ներդրվում են դասավանդման նոր մեթոդներ, կատարվում է արդյունավետ անհատական աշխատանք: Այս առումով մեծ ներդրում ունեն օտարերկրացի լեզվակիր դասախոսներ Դանիել Լեպետիտը և Վոլֆգանգ Քրիզերը, որոնք արդեն երկար ժամանակ ակտիվորեն կիրառում են իրենց դասավանդման փորձը, բացահայտում ուսուցման առավել արդյունավետ ուղիներ:

Հաշվետու տարում գերմանական բաժնի 6 ուսանող ստացել է DAAD- կրթաթոշակ և 5 ուսանող էլ Erasmus+ ծրագրով մեկ կիսամյակ սովորել Յենայի և Լյուդվիգսհաֆենի համալսարաններում: Բաժնի ուսանողներն ու դասախոսները ակտիվորեն մասնակցել են ինչպես դեսպանատների այնպես էլ այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված տարբեր միջոցառումներին:

Ընդհանուր առմամբ՝ նորընտիր ամբիոնի վարիչի ջանքերով, ուսումնական գործընթացը ամբիոնում ընթանում է նորմալ հունով, վերանայվում են որոշ դասընթացների բովանդակությունները:

Ամբիոնը մեծ ուշադրություն է հատկացնում դասավանդման գործընթացի, ավարտական աշխատանքների որակին, կատարվում են անհատական աշխատանքներ և կոնսուլտացիաներ:

Ամբիոնը ձեռնարկել է նաև մագիստրոս շրջանավարտների աշխատանքի տեղավորմանը օժանդակող միջոցառումներ: Այս նպատակով ստեղծվել են անմիջական կապեր ինչպես տեղական, այնպես էլ ՀՀ-ում գործող օտարերկրյա տարբեր կազմակերպությունների հետ:

Նմանատիպ համագործակցության արդյունքում այս տարվա հոկտեմբերին Majorel Armenia ընկերության ֆինանսավորմամբ ամբիոնում բացվեց նորագույն սարքավորումներով հագեցած մի լսարան:

Բարերարների օժանդակությամբ ամբիոնը ձեռք է բերել A2-ից B2 մակարդակների համար նախատեսված 106 դասագիրք՝ լույս տեսած 2019-2021 թվականների ընթացքում:

Նշվեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի դասախոսների կողմից տպագրվել է 7 գիտական հոդված և 1 մենագրություն:

**ԱՐՏԱՀԱՅՏՎՅԻՆ՝** Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ա.Սեդրակյանը արտահայտելով իր կարծիքը՝ նշեց, որ աշխատանքը համակարգողից շատ մեծ բան է կախված: Գ.Բարսեղյանի շնորհիվ հնարավոր է դարձել իրականացնել այն բոլոր ծրագրերը, ինչ նախատեսել էին ավարտին հասցնել ընթացիկ տարում: Հնդկաստանի հետ համագործակցության ընթացքում Գ.Բարսեղյանը իր վրա վերցրեց ամբողջ բեռը՝ կապեր հաստատելով դեսպանատան և այլ կառույցների հետ: Արտահայտվեց նաև Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Հ.Բաղդասարյանը՝ նշելով, որ ունկնդրելով Գ.Բարսեղյանի հաշվետվությունը կարելի է հետևություն անել, որ գործ ունեն բազմաշնորհ ու բազմաֆունկցիոնալ ղեկավարի հետ: Նա ջանք ու եռանդ չի խնայում ֆակուլտետում պահել կայունությունը, համագործակցային աշխատանքային մթնոլորտը: Ֆակուլտետի գիտական և ուսումնադաստիարակչական գործընթացի խթանման մեջ ղեկանը մեծ դեր ունի: Հ.Բաղդասարյանը առաջարկեց հավետվությունը գնահատել «բավարար» և համառոտ անդրադարձավ նաև ամբիոնի առաջիկա անելիքներին, ծրագրերին, ինչպես նաև ներկայացրեց ամբիոնի առջև ծառայած խնդիրները:

Արտահայտվեց նաև անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ.Ապրեսյանը, նշելով, որ համաձայն է իր կոլեգաների հետ՝ ինը ամբիոն ղեկավարելը դյուրին գործ չէ: Դա մեծապես կախված է համակարգողից՝ ղեկան Գ.Բարսեղյանից: Նա, չնայած իր երիտասարդ տարիքին, մեծ վարպետությամբ է կարողանում ղեկավարել ինը ամբիոնների անկախ ու կայացած կանանց: Նա մեծ աշխատանք է տանում ֆակուլտետի խնդիրները նվազագույնին հասցնելու գործում: Մ.Ապրեսյանը շնորհակալություն հայտնեց նաև ԵՊՀ ռեկտորին համալսարանի նկատմամբ ունեցած իր վերաբերմունքի և տարվող խնամքի

համար, Մայր բուհի ավանդական արժեքները պահպանելու համար: Մ.Ապրեսյանը կիսվեց նաև իր մտահոգություններով սոց. հարցման վերաբերյալ՝ առաջարկելով փոխել ձևաչափը:

Արտահայտվեց նաև Թարգմանության տեսության ամբիոնի վարիչ Ռ.Ղազարյանը: Նա նշեց, որ համաձայն է իր կոլեգաների հետ՝ դեկանը մեծ լուծ է վերցրել համակարգելու ֆակուլտետի աշխատանքը: Երիտասարդ դեկանը մեծ պոտենցիալ ունի, կարողանում է մարդկանց հետ ընդհանուր եզրեր գտնել, ինչը պայմանավորում էլ իր հերթին ֆակուլտետի առաջընթացը: Նա նշեց, որ միջազգայնացման գործընթացի համատեքստում պետք է ավելացվի համագործակցության շրջանակները:

Արտահայտվեց նաև Միջմշակութային հաղորդակցման անգլերենի ամբիոնի վարիչ Շ.Պարոնյանը՝ նշելով, որ Գ.Բարսեղյանը ամբողջ ֆակուլտետին, ամբիոններին դեկավարներին համախմբում է գործի շուրջ՝ լավագույն արդյունք ստանալու ակնկալիքով: Նա խոսեց միջազգայինացման մասին, որ այն կապված է մշակույթի հետ, որին գնում է թե՛ ֆակուլտետը, թե՛ իր ամբիոնը: Վերջում ներկայացրեց նաև ամբիոնի կատարած նորարարական աշխատանքները՝ հավելելով, որ աշխատում են նոր մեթոդներով՝ փորձելով միջազգայնացման հանգամանքը հավուր պատշաճի կիրառել նաև լսարանում՝ կիրառելով մշակույթին վերաբերող նյութեր: Նա խնդրեց ռեկտորին, որ թույլ տա մագիստրատուրայում գոնե շաբաթը մեկ օր անցկացվի հեռավար դաս, ինչը պայմանավորում է նորարարական ինտերնետային գործիքների կիրառումը դասապրոցեսի ընթացքում: Այդ գործընթացը ենթադրում է կարևոր նախապայման ժամանակակից դասի կայացման գործում:

Արտահայտվեց նաև Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս. Գասպարյանը՝ հավելելով, որ Գ.Բարսեղյանի հաշվետվությունը բազմակողմանի ու բազմաբովանդակ էր, իր մեջ ներառում էր ֆակուլտետի ամբողջ գործունեությունը: Ս.Գասպարյանը նույնպես անդրադարձավ սոց. հարցումներին՝ խնդրելով ռեկտորին նոր ձևաչափ ստեղծել, օպտիմալ լուծումներ գտնել գործընթացը սպահովելու համար, քանի որ ներկայիս ձևաչափը թերություններ ունի և իրեն չի արդարացնում: Երկրորդը հարցը վերաբերում էր դասախոսների որակի բարձրացման հարցին, ինչը, բազմաթիվ քննարկումների արդյունքում կարծես թե ընթացքի մեջ է, սակայն նկատելի գործընթաց կամ արդյունք չի նշմարվում: Հավելվեց նաև, որ անգլիական բանասիրության ամբիոնը կազմակերպել է հեռավար հանդիպում Պյատիգորսկի համալսարանի հետ, ինչը մեծ հետաքրքրություն առաջացրեց երկու կողմերի մոտ և բավականին օգտակար ու փոխաշահավետ համագործակցություն է ստացվել: Եզրափակելով իր խոսքը Ս.Գասպարյանը առաջարկեց քվեարկել Գ.Բարսեղյանի հաշվետվությունը գնահատելու համար:



**ՈՐՈՇԵՑԻՆՆԵՐ** Միաձայն քվեարկության արդյունքում Գ.Բարսեղյանի տարեկան հաշվետվությունը գնահատել բավարար:

ԵՊՀ ռեկտոր Հ.Հովհաննիսյանը անդրադարձավ առաջիկա անելիքներին ու խնդիրներին: Համալսարանը այս տարի ավելացրել է ֆինանսավորման շրջանակը և համագործակցությունը: Դա ենթանդրում է տեխնիկական հագեցվածություն, լաբորատորիաների ստեղծում, վերանորոգում, աշխատակիցների աշխատավարձի բարձրացում: Ավելի կատարելագործվում է ԵՊՀ աշխատակիցների բժկական ապահովագրությունը: Անդրադառնալով սոց.հարցմանը, ռեկտորը հավելեց, որ բարեփոխումները կատարվում են, ուսանողները այդ գործընթացին կներգրավվեն քննություններից առաջ: Էլեկրոնային հարթակը բարեփոխվում է՝ ավելի հեշտացնելու դասախոսների աշխատանքները: Բազմաթիվ ծրագրերի հիմք է դրվել և սպասվում է արդյունավետ համագործակցություն: ԵՊՀ ռեկտորը հորդորեց ԵԼՀ ֆակուլտետին լեզուն դասավանդել ուսանողներին նաև մասնագիտություն ապահովելու սկզբունքով՝ լեզուն և մասնագիտությունը պետք է միաժամանակ և համընթաց դասավանդվեն: Միջազգային փոխանակման ծրագրերի արդյունքում ընթացիկ տարում համալսարանում տարբեր երկրներից ուսանողներ են սովորում: Եզրափակելով խոսքը՝ ԵՊՀ ռեկտորը հաջողություն մատչեց գործընկերներին:

ԵԼՀ ֆակուլտետի ղեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝

Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝

Մ.Նալալյան

15.12.2022 թ.